# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ք.Գյումրի 07, հուլիսի 2015թ.

Հիմք ընդունելով 02.07.2015 ՀՀ Կառավարության որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարության համակարգում անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ստեղծելու մասին. համաձայն՝ Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի (13.06.2015 ՀՕ-49) 25 հոդվածի 1-ին կետի, իրավապաշտպան գործունեություն իրականացնող ներքոհիշյալ հասարակական կազմակերպությունների անունից ներկայացնում ենք համատեղ առաջարկություն՝ Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնում Մարզպետունի Ջաղոյանի թեկնածությունը: Նա հիրավի բավարարում է սահմանված պահանջներին (բարձրագույն կրթություն, բարձր հեղինակություն եւ առնվազն հինգ տարվա կառավարման ոլորտի աշխատանքային փորձ): Մարզպետունի Ջաղոյանը գերազանցությամբ բարձրագույն կրթություն ստացած անձնավորություն է, 15-ից ավել տարիների կառավարման աշխատանքային փորձով, ղեկավարում է ՀՀ հեղինակավոր հասարակական կազմակերպություններից մեկը՝ <<Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն>> ՀԿ և Արբիտրաժը, բարձր հեղինակություն է վայելում այնքան, որ պետական և հասարակական կառույցների կողմից պարգևատրված է մեդալներով, պատվոգրերով, ՀՀ Հանրային խորհրդի Պաշտպանության հարցերի հանձնաժողովի անդամ է, հեղինակ է գիտահետազոտական աշխատանքների, գիտական հոդվածների (կենսագրությունը կցվում է):

«Ժողովրդավարության կայունացում «Ֆեմիդա» իրավաբանական կլինիկա ՀԿ
նախագահ՝ Ա. Գաբրիելյան

«ՅՈԼԻՆԵ» Բարեգործական,Մշակութային, Իրավապաշտպան ՀԿ
նախագահ՝ Ա. Թադևոսյան

Շիրակի մարզի «Բարեփոխում և Զարգացում» իրավապաշտպան ՀԿ նախագահ՝ Յու. Ղազարյան

«Համայնքային նախաձեռնությունների ու քարոզչության կենտրոն» ՀԿ, Արբիտրաժ նախագահ՝ Մ. Զադոյան

«Կանթեղ» Իրավապաշտպան ՀԿ նախագահ՝ Ա. Գաբրիելյան

«ԼոգոՍ» երիտասարդական ՀԿ նախագահ՝ Ա. Մելիքջանյան

«Արաքս Կենտրոն» ՀԿ նախագահ՝ Ա. Խաչատրյան

«ՈՒԻԽ» Իրավաբանական կլինիկա» ՀԿ նախագահ՝ Ա. Ստամբոլցյան

Առաջարկությունը կազմվել է թվով 8 ՀԿ-ների կողմից՝ համատեղ (համաձայն օրենքի պետք է լինեն առնվազն 5-ը): Փաստաթղթերը ներկայացնում է «Համայնքային նախաձեռնությունների ու քարոզչության կենտրոն» ՀԿ-ն: